Արձանագրություն 6

Վանաձոր համայնքի ծանրամարտի մասնագիտացված մարզադպրոցի կառուցման աշխատանքների

ձեռքբերման «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով հրատապությամբ մեկ անձից գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «18» նոյեմբերի 2019թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Եսայան

Անդամներ

Ա.Սաղաթելյան

Լ. Հախինյան

Ա. Գրիգորյան

Վ.Մխիթարյան

Գնումները համակարգող

Լուսինե Բաղրամյան

Օրակարգ

1. **Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած որակավորման չափանիշների մասին**

1.1 «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝«ՊՐԻԶՄԱ-ՎԱՆ» ՍՊԸ-ին, ՊԵԿ-ի կողմից տրվել է բացասական եզրակացություն, և «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով հրատապությամբ մեկ անձից գնման ընթացակարգի որակավորման չափանիշների պահանջների մասով հանձնաժողովը արձանագրեց հետևյալ անհամապատասխանությունները՝

Ներկայացված նմանատիպ աշխատանքները – ներկայացված չեն արձանագրությունները և ակտերը: Բացի այդ թերի են ներկայացված «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի փաստաթղթերը՝ բացակայում են տեխնիկական անձնագրերը: Փաստաթղթերը պետք է լինեն ամբողջական: Հավելված 1.1-ում նշված տեխնիկայի հետահար մուրճի ոչ մի փաստաթուղթ չի ներկայացվել: Տեխնիկայի վարձակալության պայմանագիր N3-ում տեխնիկական միջոցի սեփականատիրոջ ազգանունը սխալ է նշված՝Բաղբուդարյանի փոխարեն նշված է Բարխուդարյան:«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ-հավելված 1.2-ում բեռնատարի վարորդի ազգանունը սխալ է նշված (Բաղբուդարյանի փոխարեն նշված է Բարխուդարյան), և բուլդոզերի վարորդի դիմաց նշված է էքսկավատորի վարորդի տվյալները, վարորդական իրավունքները ներկայացված չեն, բանվորների քանակը հրավերում նշված բանվորների թիվից 1 հոգով պակաս է ներկայացված:

Այսպիսով գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. Թիվ 526-Ն որոշման VII մասի 47-րդ կետի համաձայն «ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով հրատապությամբ մեկ անձից գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ՊՐԻԶՄԱ-ՎԱՆ» ՍՊԸ -ին, առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում/մինչև 25.11.2019թ. ժամը 10:00-ն/ շտկել հրավերի պահանջների նկատմաբ բոլոր անհամապատասխանությունները և թերությունները:

2.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ԼՄՎՔ ՀՄԱ ԱՇՁԲ-19/103» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան սույն թվականի 25 նոյեմբերի 2019թ ժամը 10:00, հասցեն՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 22 հասցեում, 311 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Եսայան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սաղաթելյան

_____ Լ. Հախինյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Վ. Մխիթարյան

Գնումները համակարգող՝ _____ Լ. Բաղրամյան